ՀԱՀ ՀԱՏՈՒԿ
ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ԲԱԺՆԻ
«ԳՈՐԾՅԱՆ ՀԱՆԳՈՒՅՑ»
ԾՐԱԳՐԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ

27-ապրիլի. 2000 թ. Թիվ. 6

ԳՈՐԾՅԱՆ ՀԱՆԳՈՒՅՑ

ՀԱՅՈՑ ԵՂԵՌՆԻ ՀԻՄՆԱՀԱՐՑ. ՊԵՏԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱՂԱԴՐԻՉ, ԹԵ՞ ՊԱՏՄԱԿԱՆ ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆ

«Գորդյան հանգույց» ծրագրի շրջանակներում կազմակերպված հերթական քննարկմանը մասնակցեցին

ՀՀ արտաքին գործերի նախարարության խոսնակ, ԱԳՆ հասարակայնության հետ կապերի վարչության պետ
Արա Պապյանը

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի տնօրեն, ակադեմիկոս
Հրանտ Ավետիսյանը

Մաշտոցի անվան մատենադարանի ավագ գիտաշխատող, պատմական գիտությունների թեկնածու, ՀԱՀ քաղաքագիտության եւ միջազգային հարաբերությունների ֆակուլտետի ասիստենտ-պրոֆեսոր
Արմեն Այվազյանը

«Գորդյան հանգույց» ծրագրի տեղեկագիր
Հայաստանի ամերիկյան համալսարան
Հասարակ դասընթացների բաժին
URL:// www.aua.am/aua/extens/lectures

Ծրագրի համակարգող
Հայր Զորյան

Հայաստանի ամերիկյան համալսարան
ՀՀ, ք. Երեւան, Բաղրամյան 40
հեռ. 27-16-58

Հասցեատեր

Հայոց ցեղասպանության հիմնահարցը թե' պատմական հիշողություն է, թե' պետական քաղաքականության բաղադրիչ, դրանք անբաժանելի են եւ պետք է դիտարկվեն մեկ ամբողջության մեջ. այսպիսի ընդհանրական կարծիքի էին հանդիպման մասնակից երեք բանախոսները: Հրանտ Ավետիսյանի գնահատմամբ, պատմական հիշողությունն այն զենքն է, կանթեղը, որը հայությանը պետք է առաջնորդի դեպի ապագա՝ բացառելով անցյալում թույլ տրված սխալները: Նա անհամաձայնություն արտահայտեց երբեմն հնչող այն տեսակետի հետ, թե անհիմաստ զբաղմունք է ամեն տարի ազգովի ցեղասպանության վերահաստատումը: Նրա համոզմամբ, հայերը ոչ միայն պետք է վերահաստատեն ցեղասպանությունը, այլեւ փաստարկված եւ հիմնավոր կերպով ներկայացնեն աշխարհին: Եվ այն իրողությունը, որ ցեղասպանության 85-ամյակը նշեց աշխարհի 375 եկեղեցի, որ մի շարք երկրների խորհրդարաններ ընդունել են Թուրքիայի կողմից Արեւմտյան Հայաստանում հայերի նկատմամբ իրականացրած ցեղասպանության փաստը, ապացույցն են նրա, որ տարվող աշխատանքն ապարդյուն չէ:

Ակադեմիկոսի խոսքերով, այսօր պատմաբանների խնդիրը պատմության այդ սեւ էջի փաստական տվյալների վերհանումն է, գիտականորեն հիմնավորված ներկայացումը, իսկ քաղաքագետների գործը դրանք տարբեր ատյաններում պատմական արդարության, պահանջատիրության տեսանկյունից ներկայացնելն է: Ըստ նրա, դժբախտաբար շատ դեպքերում աշխատանքները տարվում են տարանջատված, չհամակարգված, այն դեպքում, երբ առկա են ֆինանսական դժվարություններ: Սա ոչ թե անհատների, այլեւ պետական հոգածության գործ է, քանզի անգամ բաց արխիվների պայմաններում ֆինանսական միջոցները թույլ չեն տալիս լիարժեք օգտվել դրանցից:

> ***<<Հայերը ոչ միայն պետք է վերահաստատեն ցեղասպանությունը, այլեւ փաստարկված եւ հիմնավոր կերպով ներկայացնեն աշխարհին:>>***

Հայոց ցեղասպանության հիմնահարցը պետական քաղաքականության մեջ որպես բաղադրիչ ներառումը Արմեն Այվազյանը կարեւորեց նաեւ այն առումով, որ Թուրքիան արդեն վաղուց՝ տասնամյակներ շարունակ ցեղասպանության ժխտումը դարձրել է պետական քաղաքականության մաս: Պետական քաղաքականությունը նախ եւ առաջ ենթադրում է ծրագրավորում, տեղեկությունների կուտակում, վերլուծություն, գործողությունների կոորդինացում՝ դիվանագիտական եւ ակադեմիական բոլոր ուժերի ներգրավմամբ: ՀՀ-ում ցեղասպանության հիմնահարցը չի ընդգրկվել պետական քաղաքականության մեջ: Ըստ Արմեն Այվազյանի, վերը նշված առումով չի կարելի ասել, թե 1998-2000 թվականներին այն եղել է պետական քաղաքականության խնդիր. չկա տեղեկությունների կուտակում, պետական մարմինները տեղեկությունները չեն վերլուծում, հանձնարարականներ չեն տրվում դիվանագետներին ու ԳԱԱ աշխատակիցներին, հետագա քայլերը չեն ծրագրվում:

Խոսելով ցեղասպանության ճանաչման մի շարք կարեւոր նշանակությունների մասին, Արմեն Այվազյանը այն նախ եւ առաջ համարեց ազգային անվտանգության խնդիր: Այն հայերի համար ունի ոչ միայն բարոյական եւ իրավական, այլեւ ռազմավարական արժեք: Միջազգային հանրության կողմից ցեղասպանության փաստի ճանաչումը, ըստ Արմեն Այվազյանի, զգալիորեն կնվազեցնի հետագայում Թուրքիայի՝ Հայաստանի դեմ հնարավոր ագրեսիայի հավանականությունը: Եթե Թուրքիան եւս ճանաչի, ապա այդ հավանականությունն էլ ավելի կփոքրանա:

(շարունակությունը 2-րդ էջում)

Նրա խոսքերով, հայերի համար մեծ նշանակություն ունեն ոչ միայն անվտանգության ավանդական ոլորտները՝ ռազմական, տնտեսական, ֆինանսական, էներգետիկ, այլեւ ազգային, կոլեկտիվ հոգեբանության ոլորտը: Ցեղասպանությունից հետո հայերի հոգեբանությունը լրջորեն վնասված է, եւ, ըստ Արմեն Այվազյանի, Թուրքիան ժխտելով ցեղասպանությունը շարունակում է հարվածել այն վերապրողների, նրանց ժառանգների հոգեբանությանը: Փաստորեն, ընդհանրացնում է գիտնականը, ցեղասպանությունը չի դադարեցվել:

Արմեն Այվազյանն անհիրատեսական համարեց այն մոտեցումը, թե ցեղասպանությունը չդարձնելով պետական քաղաքականության խնդիր, կարելի է շահել Թուրքիայի բարյացակամ վերաբերմունքը եւ հաստատելով առեւտրատնտեսական հարաբերություններ, բարելավել Հայաստանի ներկա ծանր իրավիճակը: Նա հիշեցրեց, որ մինչեւ ղարաբաղյան հակամարտությունը Հայաստանն ու Ադրբեջանն ունեին հրաշալի տնտեսական հարաբերություններ, սակայն դրանք չկանխեցին հակամարտության բռնկումը: Ժամանակին հայերը, թուրքերը եւ կովկասյան թաթարներն՝ այսօրվա ադրբեջանցիները դարձյալ լավ հարաբերություններ են ունեցել, սակայն դա չի խանգարել Թուրքիայի կողմից հայերի ցեղասպանություն իրականացնելուն: Ուստի, եզրակացրեց բանախոսը, եթե երբեւ հայ-թուրքական առեւտրատնտեսական հարաբերությունները բարելավվեն, ապա դա դեռ երաշխիք չէ, որ Հայաստանի անվտանգությունն այլեւս հարցականի տակ չի լինելու. առեւտրատնտեսական հարաբերություններն ինքընստինքյան չեն բերում ռազմավարական շահերի ներդաշնակության:

<<Եթե որեւէ ոճիր, չարագործություն չի պատժվում, դատապարտվում, բացասական առումով իր արժանին չի ստանում, միշտ կա վտանգ, որ այն կկրկնվի:>>

Արա Պապյանը եւս ընդգծեց, որ ցեղասպանության հարցը դիտարկվում է նաեւ ազգային անվտանգության համատեքստում: Եթե որեւէ ոճիր, չարագործություն չի պատժվում, դատապարտվում, բացասական առումով իր արժանին չի ստանում, միշտ կա վտանգ, որ այն կկրկնվի: Այս համոզմունքը հաստատված է պատմական փորձով: Բնականաբար, ունենալով ցեղասպանություն իրականացրած հարեւան, անկախ Հայաստանը չի կարող իրեն անվտանգ զգալ, քանի դեռ այդ երկիրը չի դատապարտել իր պատմության սեւ էջերը: Այս առումով, ըստ ԱԳՆ խոսնակի, չկա որեւէ գործոն, որ բացասաբար անդրադառնա երկու երկրների հարաբերությունների վրա: Ցեղասպանության դատապարտումն ու ճանաչումը առաջին հերթին դրական է դիտվում հենց թուրք ժողովրդի, Թուրքիայի ազգաբնակչության համար, քանի որ այդ քայլը աշխարհին ցույց կտա, որ Թուրքիան կարողացել է հաղթահարել իր մեջ արմատավորված մեղքի զգացողության բարդույթը:

Ի հակակշիռ Արմեն Այվազյանի խոսքի, Արա Պապյանը նշեց այն երեք հիմնական ուղղությունները, որոնցով տարվում է ցեղասպանության ճանաչման պետական քաղաքականությունը: Թուրքիայի ներկայացուցիչների հետ հանդիպումների, զրույցների ժամանակ այդ հարցը մշտապես քննարկման առարկա է դառնում: Դրվում է որպես հարց, որը պետք է լուծվի միասնաբար՝ երկու ժողովուրդների, պետությունների ջանքերի շնորհիվ, ինչը կնպաստի փոխվստահության վերականգնմանը, բարիդրացիական հարաբերությունների հաստատմանը: Արա Պապյանը չհամաձայնեց, որ հարցի բանակցային օրակարգ ներգրավումը խանգարում է երկկողմ հարաբերությունների հաստատմանը: Ընդհակառակը, նրա վկայությամբ, հարցը կոծկելու պարագայում թուրքերը սկսում են մտավախություն ունենալ, չվստահել, ակնկալելով, որ վաղ թե ուշ հարցադրումն արվելու է: Եվ այդ անվստահության մթնոլորտի իսպառ վերացման ճանապարը հենց Թուրքիայի կողմից ցեղասպանության դատապարտումն է, ինչը երկու հարեւան երկրներին հնարավորություն կտա առաջ շարժվել:

Աշխատանքների ծավալման երկրորդ մակարդակն այլ երկրների հետ երկկողմ հարաբերություններն են: Ակնկալվում է, որ առաջիկայում կավելանա այն երկրների թիվը, որոնց խորհրդարանները ճանաչել են 1915 թ. հայոց ցեղասպանությունը: Ավելին, տեղի է ունեցել հարցադրման որոկական փոփոխություն: Մասնավորապես Իտալիայի խորհրդարանում ցեղասպանության ճանաչման հարցի քննարկման ժամանակ առաջ է քաշվել այն գաղափարը, որ այդ խնդիրը եվրոպական միասնական արտաքին քաղաքականության հիմքում պետք է դրվի որպես միասնական հարց: Այսինքն, Եվրոպական միությունը պետք է միասնական դիրքորոշում ունենա հայոց ցեղասպանության ճանաչման հարցի առնչությամբ. այս խնդիրը միայն երկու երկրներին չի առնչվում, այլ հստակորեն տեղավորված է Եվրոպա-Թուրքիա հարաբերությունների ճանապարհին:

Երրորդ մակարդակը, որով պետությունը առաջ է մղում հարցի ճանաչումը բազմակողմանի միջազգային հանդիպումներն են, համաժողովները:

Միայն մեկշաբաթյա կամ տասնօրյա աշխատանքը շատ քիչ է, պահանջվում է տեւական աշխատանք, ինչը, Արա Պապյանի հավաստմամբ, արվում է հնարավորին սահմաններում: Պետք է հաշվի առնել, որ բացի պատմական ճշմարտությունից, ինչի նկատմամբ կասկած ոչ ոք չունի, գոյություն ունեն նաեւ քաղաքական, տնտեսական շահեր: Շատ քիչ պետություններ կան, որոնք պատրաստ են զոհելու իրենց շահը՝ հանուն պատմական արդարության:

Ըստ ԱԳՆ խոսնակի, ցեղասպանության ճանաչման հարցը երբեք չի դրվել հայ-թուրքական հարաբերությունների հիմքում: ՀՀ-ն միշտ պատրաստակամ է եղել հաստատելու դիվանագիտական հարաբերություններ, ինչի շնորհիվ հենց հնարավոր կլինի նստել կլոր սեղանի շուրջ եւ լուծումներ տալ այն խնդիրներին, որոնք կան երկու ժողովուրդների միջեւ եւ որոնք անտեսել չի կարելի: Թուրքիան Հայաստանի հետ իր հարաբերությունները պայմանավորում է երրորդ երկրի՝ Ադրբեջանի հետ ՀՀ -ի ունեցած հարաբերություններով, Լեռնային Ղարաբաղի խնդրով, վերջինիս լուծման համար հաճախ առաջ քաշելով անընդունելի պայմաններ: Հայ-թուրքական հարաբերությունները դեռեւս պետականորեն սառեցված են: